ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՍՏՈԿՀՈԼՄ (ՇՎԵԴԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

- **Անունը, ազգանունը.**

  Արմինե Ալավերդյան

- **Զբաղեցրած պաշտոնը.**

  ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հավասար հնարավորությունների ապահովման վարչության մարդկանց թրաֆիքինգի և կանանց հիմնահարցերի բաժնի գլխավոր մասնագետ

- **Գործուղման վայրը և ժամկետները.**

  Շվեդիայի Թագավորություն, Ստոկհոլմ, 2024 թվականի հոկտեմբերի 20-ից 24-ը:

- **Հրավիրող կողմը.**

  Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակ:

- **Գործուղման նպատակը.**

  Այցի նպատակն է իրականացնել փորձի փոխանակում ընտանեկան բռնության դեպքերի կանխարգելման և պայքարի համատեքստում Շվեդիայի կառավարության, Շվեդիայում գործունեություն ծավալող հասարակական կազմակերպությունների և ոչ պետական այլ մարմինների կողմից ձեռնարկված միջոցառումների, քաղաքականությունների և կիրառվող գործիքակազմերի վերաբերյալ:

- **Քննարկված թեմաները.**

Ուսումնական այցի ընթացքում քննարկվել են Ընտանեկան բռնության կանխարգելման և պայքարի գործընթացում ներառված պետական և ոչ պետական մարմիններին առնչվող հետևյալ հարցերը՝

- Շվեդիայի ոստիկանության դերն ու լիազորությունները ընտանեկան բռնության դեպքերի բացահայտման և հրատապ գործողությունների ձեռնարկման շրջանակում,

- Շվեդիայի բանտերի և պռոբացիայի ծառայության աշխատանքը ընտանեկան բռնություն գործադրած անձանց հետ,

- Շվեդիայի շրջանային վարչական խորհրդի գործունեությունն ու լիազորությունները Ստոկհոլմի շրջանում,

- Կանանց դեմ տղամարդկանց բռնության վերաբերյալ գիտելիքների ազգային կենտրոնի կողմից առաջարկվող դասընթացներն ու իրականացված հետազոտությունները ընտանեկան բռնության դեպքերի ու դրանց տարաբնույթ դրսևորումների առնչությամբ,

- Շվեդիայի դատախազության դերն ու լիազորությունները ընտանեկան բռնության դեպքերի բացահայտման ու արագ արձագանքման մեխանիզմների կիրառման համատեքստում,

- Կանանց և Երիտասարդ կանանց ապաստարանների ազգային կազմակերպություն Շվեդիայում՝ ապաստարանի և աջակցման կենտրոնների գործունեությունը, առկա իրավակարգավորումները, համագործակցությունը Շվեդիայի կառավարության հետ,

- Շվեդիայի աշխատանքի նախարարության գենդերային հավասարության բաժնի հիմնական գործառույթները, երկրում գենդերային հավասարության ապահովման իրավական հիմքերը, աշխատանքային խմբերն ու համագործակցությունը այլ նախարարությունների և պետական մամինների հետ:

- «Շվեդական Միջազգային Զարգացման Համագործակցության Գործակալության» (SIDA)-ի հիմնական քաղաքականությունը, սահմանած առաջնային ուղղությունները և համագործակցությունը Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակի հետ:

- MÄN, Համահավասար աշխարհ առանց բռնության կազմակերպության գործունեությունն ու ընդհանուր քաղաքականությունը, իրականացվող ծրագրերն ու միջոցառումները, հիմնական թիրախ խմբերը:

- **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Հանդիպումների ընթացքում վերոնշյալ բոլոր կառույցների ներկայացուցիչները հանդես են եկել զեկույցներով՝ մանրամասնորեն անդրադարձ կատարելով ինչպես կառույցների ընդհանուր գործունեությանը, այնպես էլ ոլորտում առկա խնդիրներին ու մարտահրավերներին և դրանց լուծմանն ուղղված գործողություններին:

Ուսումնական այցի շրջանակում հայկական պատվիրակության որոշ անդամներ հանդիպում են ունեցել նաև Արևելյան գործընկերության Շվեդիայի դեսպան Քրիստինա Յոհաննեսոնի հետ: Հանդիպման ընթացքում դեսպանը հայտնել է, որ բարձր է գնահատում ՀՀ կառավարության ջանքերը՝ ուղղված երկրում գենդերային հավասարության ապահովմանն ու ընտանեկան բռնության կանխարգելմանը:

Հանդիպման ընթացքում դեսպանին ներկայացվել է երկրում գենդերային հավասարության ապահովման ու ընտանեկան բռնության կանխարգելման ու դրա դեմ պայքարի շրջանակում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ քննչական կոմիտեի, ՀՀ ներքին գործերի նախարարության և Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կողմից կատարված և կատարվող աշխատանքներն ու միջոցառումները, վերահաստատվել է ՀՀ կառավրության հանձնառությունն ու պատրաստակամությունը ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակներին համահունչ քաղաքականությունների որդեգրման ու կիրարկման առնչությամբ:

Որպես ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի ներկայացուցիչ՝ Դեսպանին ներկայացրել եմ ՀՀ-ում գենդերային քաղաքականության 2024-2028 թթ" ռազմավարական ծրագրի ընդունմանն ուղղված աշխատանքերի ընթացքը՝ ներկայացնելով փաստաթղթում առանձացված 6 գերակայություններն ու ըստ այդմ

սահմանված միջոցառումներն ու գործողությունները: Ելույթիս ընթացքում խոսել եմ ոլորտային մի շարք բարփոխումներից, մասնավորապես՝

- Ընտանեկան բռնության ենթարկված անձանց մատուցվող սոցիալական աջակցության ծառայություններ,
- Կանանց տնտեսական հզորացման ծրագրեր,
- ՀՀ-ում գենդերային քաղաքականության իրականացման ազգային մեխանիզմ, այդ թվում՝ համագործակցություն միջազգային կազմակերպությունների ու գործընկերների հետ,
- Ընտանեկան բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման էլեկտրոնային հարթակ,
- Օրենսդրական փոփոխություններ՝ միտված որոշումների կայացման գործընթացում կանանց մասնակցության և ներկայացվածության խթանմանը:

Դեսպանը նշել է նաև, որ տպավորված է սույն թվականի մայիսի 30-ից 31-ը Բրյուսելում տեղի ունեցած Արևելյան գործընկերության գեդներային հավասարության աշխատանքային խմբի հանդիպման շրջանակում Հայաստանի պատվիրակության ելույթով՝ հույս հայտնելով, որ աշխատանքային խմբի հաջորդ հանդիպմանը ևս հնարավորություն կունենանք հանդիպել և անդրադառնալ ոլորտային աշխատանքների ընթացքին ու գրանցած արդյունքներին:

Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Որոշումներ չեն ընդունվել, փաստաթղթեր չեն ստորագրվել

- **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

- Համագործակցություն Շվեդիայի թագավարության աշխատանքի նախարարության գենդերային հավասարության բաժնի հետ՝ գենդերային հավասարության ապահովմանը միտված քաղաքականությունների մշակման շրջանակում,

- Քաղաքացիական ծառայողների և հանրային ծառայողների վերապատրաստումների իրականացում Կանանց դեմ տղամարդկանց բռնության վերաբերյալ գիտելիքների ազգային կենտրոնի կողմից Կենտրոնի հետ համագործակցության ձևավորման արդյունքում,

- MÄN, Համահավասար աշխարհ առանց բռնության կազմակերպության հետ համագործակցության ձևավորում և համատեղ դասընթացների ու վերապատրաստումների իրականացում ընտանեկան բռնություն գործադրած անձանց համար ռեաբիլիտացիայի ծրագրերի մշակման ու իրականացման համատեքստում:

- Փորձի փոխանակում Կանանց և Երիտասարդ կանանց ապաստարանների ազգային կազմակերպության հետ Շվեդիայում գործող աջակցության կենտրոնների ու ապաստարանների համար սահմանված չափանիշների, օրենսդրական կարգավորումների, ընտանեկան բռնության զոհերին մատուցվող այլ ծառայությունների և ուղղորդման կառուցակարգերի առնչությամբ:

- **Ստորագրությունը, ամսաթիվը:** 29.10.2024թ

Արմինե Ալավերդյան `